ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2016 թվականի N 31-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 26.04.2016ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սևան համայնքի ավագանու՝ 26.04.2016թվականի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը անհատույց / մշտական / օգտագործման նպատակով տարածք տրամադրելու մասին» թիվ 18-Ա որոշման 1-ին կետում կատարել փոփոխություն՝
   - ✓ թույլատրել Սևան համայնքի ղեկավարին՝ համայնքի հաշվեկշռում հաշվառված, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 164 հասցեում գտնվող համայնքապետարանի վարչական շենքի 1-ին հարկից 771.51քմ և 2-րդ հարկից 270.35քմ, ընդհանուր՝ 1041.86քմ մակերեսով տարածքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոնի գործունեության համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2016 թվականի N 32-Ա

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ / ԲՆԱԿԱՎԱՅՐԻ / ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ՝ ԳԱԳԱՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐԱՌՄԱՄԲ» ՆԱԽԱԳԾԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 274-277, 278 հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 48.1 հոդվածի 6-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, նկատի ունենալով, որ կառուցապատման նպատակով զբաղեցված հողատարածքները չեն հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածքներ և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի՝ 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.03.2016 թվականի թիվ 18՝ կառուցապատման իրավունքով զբաղեցված շենք-շինությունները նվիրաբերելու և հողատարածքը ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին եզրակացությունը, **որոշում եմ.**

1. Հողատարածքների նշանակությունները համապատասխանեցնել Սևան համայնքի / բնակավայրի / լրամշակված գլխավոր հատակագծին /ցանկը կցվում է/:
2. Կառուցապատման իրավունքով զբաղեցված հողատարածքները, դրանցով ծանրաբեռնված շենք-շինությունները ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
3. Կառուցապատման իրավունքով զբաղեցրած հողատարածքներն ուղղակի վաճառքի կարգով օտարել կառուցապատողներին՝ հողի կադաստրային արժեքը / 1քմ-1242 դրամ / վճարելու պայմանով:
4. Կառուցապատողներին նվիրաբերել իրենց կողմից և իրենց միջոցներով կառուցված շենք-շինությունները:
5. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Սևան համայնքի / բնակավայրի / լրամշակված գլխավոր հատակագծին համապատասխանեցվող հողատարածքների

ՑԱՆԿ

1. ք. Սևան, Երևանյան խճուղի 1 / 7 – 1500քմ
2. ք. Սևան, Նաիրյան 161 – 622 քմ
3. ք. Սևան, Նաիրյան 157 / 3 – 7.86քմ
4. ք. Սևան, Աբովյան 6 / 4 - 686քմ
5. ք. Սևան, Ֆրանսիական 1 / 1 – 52.08քմ
6. ք. Սևան, Գրիբոյեդով 3 / 162 – 40.53քմ
7. ք. Սևան, Գրիբոյեդով 3 / 161 – 47.25քմ
8. ք. Սևան, Ֆրանսիական 1 / 2 – 31.0քմ
9. ք. Սևան, Նաիրյան 160 / 3 – 150.0 քմ
10. ք. Սևան, Նաիրյան 147 / 20 – 56քմ
11. ք. Սևան, Սայաթ-Նովա 12 / 3- 30.5քմ
12. ք. Սևան, Նաիրյան 196 – 158քմ
13. ք. Սևան, Սայաթ-Նովա 12 / 3-1 – 18քմ
14. ք. Սևան, Սայաթ-Նովա 12 / 3-2 – 28.5քմ
15. ք. Սևան, Նաիրյան 171 / 1-1 – 53.5քմ
16. ք. Սևան, Շինարարների 12 շենքից արևելք – 18քմ
17. ք. Սևան, Գրիբոյեդով 2 / 44 – 39.4քմ
18. ք. Սևան, Սայաթ-Նովա փողոցից արևելք – 100քմ
19. ք. Սևան, Սարգիս Սևանեցի 19 շենքից արևելք – 72քմ
20. ք. Սևան, Նաիրյան 160 / 4 – 165քմ
21. ք. Սևան, Գրիբոյեդով 2 / 43 – 79.3քմ
22. ք. Սևան, Սայաթ-Նովա 15 շենքից արևելք – 17.5քմ
23. ք. Սևան, Նաիրյան 1-ին նրբ. թիվ 8 – 30քմ
24. ք. Սևան, Նաիրյան – Շինարարների - 12քմ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2016 թվականի N 33-Ա

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու՝ 07.02.2001թ. նիստի արձանագրությունը, հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական գործակալության Գեղարքունիքի մարզային վարչության տնօրենի գրությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական գործակալության Գեղարքունիքի մարզային վարչությանը հատկացնել ք. Սևան, Կ. Դեմիրճյան 17 հասցեում գտնվող թիվ 1 «Բողբոջ» մսուր-մանկապարտեզի շենքի 2-րդ հարկից 158.67քմ տարածք՝ 20 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2016 թվականի N 34-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԱԳԱՐԻՆ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 01.10.2001թ. թիվ 82 հրամանը և ՀՀ կառվարության՝ 09.07.2009թ. թիվ 808-Ն որոշումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել «Գագարինի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքն անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով հատկացնելու «Գագարինի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ